



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

20 ՄԱՐՏԻ
2025 թ.
№ 4 (1141)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
երկշաբաթաթերթ • հրատարակման 60-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸԱՅՎԱԿԱՆ ԴԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՄՍԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՇՏՈՒԱԹԵՐԹ

ՄԵՐ ԴԱՇՏՈՒԱԹԵՐԹԸ 60 ՏԱՐԵԿԱՆ Է



Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Մանկավարժական ինստիտուտ» պաշտոնաթերթը 2025 թվականի մարտի 11-ին դարձավ 60 տարեկան:

Ընդհանրապես եմ բոլորիս այս կարևոր իրադարձության առթիվ:
Բուհական թերթը ժամանակի հետ տարբեր ուղղվածություն է ունեցել՝ խորհրդային գաղափարախոսությունից մինչև ազգային զարթոնք, մինչև մերօրյա 21-րդ դարի մարտահրավերներ՝ արձանագրելով տարբեր սերունդների կյանքի շրջափուլերի կարևոր իրադարձությունները:

Մանկավարժականի պաշտոնաթերթում խմբագիրներ և լրագրողներ են աշխատել հետագայում տարբեր ասպարեզներում ճանաչված մարդիկ՝ Պետրոս Բեդիրյան, Ալեք Սաչունց, Լևոն Անանյան, Վանո Սիրադեղյան, Հովհաննես Պապիկյան և ուրիշներ:

Այսօր էլ համալսարանի պաշտոնաթերթն անդրադառնում է համալսարանի գործունեությանը, բարձրագույն կրթական համակարգի խնդիրներին՝ դառնալով բուհի պատմությունն ու տարեգրությունը:

«Հոգեբանության պարզացման հեռանկարները Հայաստանում». հանրապետական գիտաժողով Մանկավարժականում

Մանկավարժական համալսարանում անվանի հոգեբան Սկրտիչ Արամի Մազմանյանի ծննդյան 115-ամյակը նշանավորեցին «Հոգեբանության պարզացման հեռանկարները Հայաստանում» հանրապետական գիտաժողովի կազմակերպմամբ:
Գիտաժողովը բացեց համալսարանի ռեկտոր Սրբուհի Գևորգյանը: Նա ընդգծեց՝ գիտաժողովի խորագիրը լայն է և վկայում է հոգեբանության ոլորտում առկա սուր մարտահրավերների մասին:

Այդ համատեքստում ռեկտորն անդրադարձ արեց ակադեմիկոս, ոլորտի եզակի մասնագետ Սկրտիչ Մազմանյանի գործունեությանը, մասնագիտական ձեռքբերումներին, գիտական ստեղծագործական ժառանգությանն ու նրանում վեր հանված հիմնախնդիրներին, ակադեմիկոսի հիմնած հոգեբանական պրոբլեմների ուսումնասիրության լաբորատորիային Մանկավարժական բուհում և թողած հետագծին:

Սրբուհի Գևորգյանն անդրադարձավ ժամանակների լավագույն հոգեբանների գործունեության էական կողմերին, մասնավորապես՝ պրոֆեսոր Հովսեփ Թութունջյանի և Սկրտիչ Մազմանյանի տեսական ներդրումներին ուղղորտի զարգացման գործում:

Միաժամանակ դիմելով դահլիճում ներկա ուսանողներին՝ ռեկտորը հորդորեց

ակտիվ երկխոսության գնալ՝ հասկանալու նոր սերնդի հոգեբանի փոփոխություններն ու պատճառները, ուղիներ փնտրել երևույթների խորքը հասկանալու և մասնագիտական բացթողումները լրացնելու համար: Ուսուցման կազմակերպման և ներդաշնակեցման առումով բանախոսը կարևորեց հոգեբանական տարբեր մոտեցումներն ու բացահայտումները:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում հոգեբանի հաստիքի պարտադիր առկայությունը ռեկտորը պայմանավորեց ապագա հոգեբանների հավասարակշռված ու հստակ գործունեության անհրաժեշտությամբ, ինչպես նաև հոգեբանական տիրույթի անընդհատ ուսումնասիրությամբ, ուր ժամանակի մվիրյալ հոգեբանները մեծ ժառանգություն են թողել:

ՀՊՄՀ ուսումնագիտական գծով պրոֆեսոր Սարիամ Իսախրյանը ողջունեց գիտաժողովի կազմակերպման նախաձեռնությունը և վստահություն հայտնեց՝ գիտաժողովում կլինեն արդյունավետ քննարկումներ ու երկխոսություն՝ ոլորտի հիմնախնդիրների բացահայտումների տեսանկյունից:

Սկրտիչ Մազմանյանի կյանքին ու գործունեությանը վերաբերող զեկուցումով հանդես եկավ Հոգեբանութ- ➤3

Գիտյուններ՝ մագիստրոսներին



Սկզբնական կրթության ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի մագիստրոսական կրթական ծրագրի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության շրջանավարտները հանդիսավոր պայմաններում ավարտական վկայագրեր ստացան: Նրանց շնորհավորեցին և բարեմաղթանքի խոսքեր հղեցին դեկան Հեղինե Խաչատրյանը, փոխդեկան Արմինե Սիբայեյանը, Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի պաշտոնակատար Արմենուհի Մանուկյանը, Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ջուլիետա Գյուլամիրյանը:

Դեկան Հեղինե Խաչատրյանն էլ հորդորեց իրականություն դարձնել բոլոր ցանկություններն ու նպատակները և ունենա հետագա մասնագիտական լուրջ զարգացումներ:


Շրջանավարտներն իրենց երախտիքի խոսքն արտահայտեցին դասախոսների հանդեպ, փաստեցին, որ ստացած գիտելիքներն ու այստեղ ձևավորված հմտությունները նպատակին կձառայեցնեն:

Լիլիթ Բուդաղյանը շրջանավարտներից մեկն է, որն ա-

վարտեց Սկզբնական կրթության ֆակուլտետի «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության հեռակա մագիստրոսական կրթական ծրագիրը: Լիլիթը Նոյեմբերյանից է, ներկա պահին էլ աշխատում է Նոյեմբերյանի N 2 մանկապարտեզում: Թեև բազային կրթությունը նա ստացել է այլ համալսարանում, մեծապես գնահատում է ՀՊՄՀ-ում մագիստրոսական ծրագրի ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու հմտությունները:

«Մագիստրոսական կրթությունը հնարավորություն տվեց ավելի խորանալ տվյալ մասնագիտության մեջ: Արդեն երկուսուկես տարի աշխատում եմ մանկապարտեզում: Խնդիրներ հանդիպում եմ, հեշտ չէ փոքրիկների հետ աշխատել. նրանք ակտիվ են, խելացի, պետք է կարողանալ հասկանալ յուրաքանչյուրին, ըմբռնել ոլորտի առանձնահատկությունները, ավելի հետաքրքիր մեթոդներ կիրառել, հետաքրքիր միջոցներով գրավել երեխայի ուշադրությունը», -ասում է Լիլիթը՝ վստահեցնելով, որ այդ տեսանկյունից մագիստրատուրայում կրթությունը շատ արդյունավետ էր, շատ բան սովորեց և ստացած գիտելիքներն անպայման կկիրառի աշխատանքում:

Նիկոլ ԱՐԲԱԼՅԱՆ-150



«Զնայած, որ մեր երկիրն ավերված է, մեր ժողովուրդը՝ աղքատության մեջ, մենք հիմնում ենք բարձր կրթարան: Այն, ինչ որ մենք ունենք այսօր, ձեռք է բերված սերունդների արյունով, հարգենք նրանց հիշատակը: Մենք վերաշինում ենք մեր տունը և հիմնում կրթության տաճարներ՝ առանց խորհելու, թե ինչ են մտածում մեր մասին մեր թշնամիները, որոնք միշտ քանդել են մեր շինածը: Մեր մեջ հավատ կա, որ այս անգամ հայոց ազգի նավը դուրս կգա փոթորկից անփորձանք: Մեր թշնամիները չեն հաջողելու, և այն ջահը, որ մենք վառում ենք Հայաստանի բարձրավանդակի վրա, չի հանգչի և կլուսավորե Առաջավոր Ասիան: Անցնում է մղձավանջը և պայծառանում Հայաստանի երկինքը: Դեռ մեզ համար բոլոր վտանգները անցած չեն, դեռ մեկ ձեռքում սուր պիտի ունենանք, բայց արդեն ժամանակն է, որ մյուս ձեռքում գրիչ բռնենք...»:



Երախտավորներին գնահատելու լավագույն օրինակը



Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Անատոլի Սահակյանի «Մանկավարժական մտքի պատմություն» ուսումնական ձեռնարկը տպագրության է երախտավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի կողմից և հրատարակվել է 2010 թվականին: Մանկավարժական համալսարանում մարտի 19-ին, բավականին ուշացումով, կազմակերպվել էր գրքի շնորհանդեսը:

Ձեռնարկը նախ և առաջ ուշագրավ է կրթության և մանկավարժական մտքի ձևավորման պատմական օրինակափոխությունների ներկայացմամբ, մանկավարժական մտքի հայտնի անհատականություններին, մանկավարժության բնագավառում վերջիններիս հայացքների ու դերի անդրադարձով:

Անատոլի Սահակյանը հանգամանորեն ներկայացրել է դաստիարակության խնդիրները անտիկ շրջանում, միջնադարյան դպրոցն ու մանկավարժական միտքը միջնադարում, Վերածննդի դարաշրջանում, այնուհետև նրա հայացքի ու գրչի ներքո հայտնվել են նոր և նորագույն շրջանի հայ դպրոցն ու մանկավարժական մտքի դրսևորումները:

Երջանկահիշատակ Անատոլի Սահակյանի գրքի շնորհանդեսը կազմակերպվել էր նրա ընտանիքի, դստեր՝ ամբիոնի վարիչ Նարինե Սահակյանի և Մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ: Համալսարանի ընթերցասրահում այնքան ջերմություն կար նրա գործունեության հանդեպ, այնքան անկեղծ ու դրական միջավայր՝ համեմատած անցյալի հիշողություններով, որ կարելի էր կարծել՝ Մանկավարժականի նախկին ուսանողն ու վարչատնտեսական աշխատանքի երկարամյա ղեկավար Անատոլին ներկա է ընթերցասրահում, այն ընթերցասրահում, որի կառուցման համար ջանք ու եռանդ էին խնայել:

ՀՊՄՀ ղեկավար Սրբուհի Գևորգյանն իրավափորձ ընդգծեց՝ յուրաքանչյուր ոք, ով առնչվել է Մանկավարժականի հետ, գործունեություն ծավալել, արժանի է հիշատակման:

Անատոլի Սահակյանը 1965 թվականից իր ճակատագիրը կապել է Հայկական պետական մանկավարժական համալսարանի հետ, 1971-ին ավարտել է համալսարանի պատմության ֆակուլտետը, նաև 1965-ից սկսել է աշխատել բուհում, զբաղեցրել տարբեր պաշտոններ: Այստեղ է պաշտպանել և ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, ապա դոցենտի կոչում: 2000-2010 թվականներին նա զբաղեցրել է համալսարանի վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնը:

Ռեկտորն անդրադարձավ Անատոլի Սահակյանի անհատականությանը, հո-

գեկերտվածքի յուրահատկություններին, նրա սոցիալական պատմությանը: Սրբուհի Գևորգյանը նախ և առաջ Ա. Սահակյանին բնորոշեց մարդկային հարաբերությունների համատեքստում: Հիշեց նրա հետ իր աշխատանքային շփումները՝ կապված վարչատնտեսական գործունեության հետ, երբ լուծումները լինում էին շատ արագ և որակով: Եվ բոլոր խնդիրներն ու միջամտությունները, որտեղ անհրաժեշտ էր Անատոլի Սահակյանի ներկայությունը, իրապես լուծվում էին ոչ միայն աշխատանքային գործունեության գործառնությունների հետ կապված, այլև նրա անհատականությանը բնորոշ հուսմանով, բարությանը,



ժպիտով... Եվ ընդհանրապես, աշխատանքային հարաբերություններում նա մշտապես կարևորում էր այդ մթնոլորտը, ինքը մթնոլորտի մարդ էր՝ իրենից ճառագող լույսով ու հանգստությամբ, և միշտ խուսափում էր կոնֆլիկտածին իրադրություններից:

«Այն հիմնարար գծերից մեկը, որ կարող եմ մշել, նրա անսահման բարությունն էր», -ասաց ղեկավարը՝ անդրադառնալով նախաձեռնության մեկ այլ կողմին՝ Անատոլի Սահակյանի գրքերի նվիրատվությանը բուհի ընթերցասրահին, որը նպաստելու է համալսարանի ուսանողների, մանկավարժության բովանդակության, պատմության, գործառնությունների և ժամանակակից կրթական ոլորտում զարգացնելու և վերահաստատելու այն, ինչը որ հասկացությունների ձևաչափով ավանդել է պարոն Սահակյանն իր գիտական գործունեության ընթացքում:

«Անձնավորություն, անհատականություն, սոցիալական իր կարգավիճակներում այդ մեծ ու բարի մարդը՝ իրապես ժպիտի, հանգստի, ներդաշնակության մարդ էր, ում համար կարևոր էին ընտանիքն ու աշխատանքը, և ում համար աշխատանքի վայրը վաղուց

դարձել էր առաջին ընտանիքը, որտեղ նա իր անհատականությանը բնորոշ լույսի, բարության, մարդկային հաղորդակցման կարևորագույն պահանջներին բավարարման բազմապիսի դերերում միշտ առանձնանում էր մարդկանց նկատմամբ հոգածությամբ: Եվ այդ հոգածության ներքո կոնֆլիկտածին հարաբերությունների թնջուկում միշտ կարողանում էր լուծել բարդ խնդիրներ», - ամփոփեց ղեկավարը:

Ռեկտորը շնորհակալություն հայտնեց ընտանիքին, անդրադարձավ Անատոլի Սահակյանի դուստրերին և տղային, նրանց մասնագիտական առնչություններին Մանկավարժականում, և փաստեց՝ Սահակյանների ներդրումն այսօր որպես մանկավարժական, կրթական մի օրինակ շարունակաբար հրամցվում է մեզ և մեր ուսանողներին:

Ելույթ ունեցավ դոցենտ Իզաբելլա Բաբայանը, նա արժևորեց Անատոլի Սահակյանի գրքերը. «Անհրաժեշտաբար և ճիշտ ժամանակին՝ 2005-ին ծնվեց «Մանկավարժություն» ձեռնարկը՝ տեսության հարցերին նվիրված ամբողջական ձեռնարկ, որը դարձավ ուսանողների սեղանի գիրք: Մանկավարժության պատմության տարբեր գրքեր կան, բայց 2010-ին տպագրված «Մանկավարժական մտքի պատմություն» գիրքը մյուսներից առանձնանում է նրանով, որ նորովի է ներկայացնում նաև իր

նվիրյալ: Նա Մանկավարժական համալսարանի ծնունդ է, սովորել և աշխատել է Մանկավարժականում: Ի պատիվ իրեն և իր աշխատասիրության՝ բուհի տնտեսական մասը աշխատում էր առավել իրիկուն», -ասաց Ա. Ղուկասյանը: Նա շատ ընտանեկան էր, զավակները և թոռները պետք է հպարտությամբ հիշեն նրան: Շատ էր սիրում իր հայրենի Ապարանը, միշտ լուծումներ էր գտնում իրեն խնդրով դիմող հայրենակիցների համար:

Այսօրվա նախաձեռնությունը, կարծում են, երախտավորներին գնահատելու լավ օրինակ է»:

Միջոցառումը վարող ՀՊՄՀ գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանը հիշեցրեց՝ Անատոլիի պապը՝ Դավիթ Մելիքսեթյանը, եղել է Մանկավարժականի գլխավոր հաշվապահը, նա հայտնի է Ապարանի հերոսամարտին մասնակցությամբ:

Անատոլիի մասին հուշեր պատմեց Թամարա Ալոյանը, որը նրան ճանաչում է դեռևս 1965-ից՝ ուսանողական տարիներից, իրար հետ ակտիվ հասարակական գործունեություն են ծավալել: «Շատ լավ էր, որ Անատոլին ավարտելուց հետո մնաց բուհում, աշխատեց, և դրանից շահեց բուհը»:

Թամարա Ալոյանը գնահատեց ուսանողական տարիների, ապա գործընկերոջ աշխատանքային ջիղը, հիշեցնելով, որ Մանկավարժականը ղեկավարատի շենք չունեց, որ այդ կառույցի շինարարությունը ևս կապված է Անատոլի Սահակյանի անվան ու գործունեության հետ:

ՀՊՄՀ նախկին պրոռեկտոր Մեծլում Երիցյանը ևս համատեղ աշխատել է Անատոլիի հետ: Երախտավորներին պետք է հիշել՝ ասաց նա, փաստելով, որ համալսարանի ամեն կառույց կապված է նրա անվան ու աշխատանքի հետ: Նա համալսարանում կերտել է մեծ պատմություն. նա ոչ միայն լավ շինարար էր, այլև լավ գիտնական: Մանկավարժության տեսությանը և պատմությանը նվիրված նրա ձեռնարկներն այսօր դասագիրք են երիտասարդ սերնդի համար: Նա օրինակելի մարդ էր իր կեցվածքով, խառնվածքով, մարդասիրությամբ, համալսարանին իր նվիրվածությամբ և որպես իսկական ապարանցի:

Անատոլի Սահակյանի ավագ դուստրը, որը երկար տարիներ ղեկավարում է Առաջին բուժօգնության և ֆիզիոլոգիայի ամբիոնը, շնորհակալության խոսք հղեց բուհի ղեկավարությանը, Անատոլի Սահակյանի հավատարիմ ընկերներին՝ բնութագրական ելույթների ու խոսքերի, նրա տեսակը ընկալելու համար. «Հայրս իր օրինակով նախ և առաջ մեզ սովորեցնում էր մարդ լինել, ապրել արժանապատիվ, կրել պատասխանատվություն սեփական աշխատանքի, ընտանիքի նկատմամբ, սիրել ծնողներին և հարազատներին, հավատարիմ մնալ ընկերներին: Նա կյանքը ճանաչում էր բոլոր կողմերով, առանց բացառության, և այս տեսակետից ուսուցիչ էր մեզ համար: Նա օրինակելի էր գերդաստանում, ծնողապաշտ էր, ընտանիքն էր նրա սրբությունը, և ես շնորհակալ եմ այդ ամենի համար»:

Անատոլի Սահակյանի ընտանիքի կողմից բուհի ընթերցասրահին նվիրված 64 մանկավարժական ձեռնարկ կիսմալի համալսարանի գրադարանը՝ որպես ուսանողների սեղանի ամենօրյա դասագիրք:



Բացառիկ ցուցադրություն

ՀՊՄՀ Լևոն Կոչոյան ցուցասրահում մարտի 19-ին բացվեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի մանկավարժարվեստագետների աշխատանքների ցուցահանդեսը: Ներկայացված ստեղծագործությունները հոգևոր թեմատիկայով էին. 20 հեղինակի 20 աշխատանք՝ կերպարվեստի, դեկորատիվ-կիրառական արվեստի բազմաոճ գործեր՝ գեղանկար, քանդակ, բատիկա, գորելեն, փայտի փորագրություն:

Ցուցահանդեսը բացեց Տեր Զարեհ քահանա Աշուրյանն ու խոստովանեց՝ իր համար նորովի է բացահայտում Մանկավարժականը, ուր ուսանողը ոչ միայն կրթություն է ստանում, այլև բարեկրթվում է, ձևավորում ճաշակ, ստեղծագործական մտքի մեծ հորիզոններ:

Տեր Զարեհ քահանա Աշուրյանը հիշեցնում է՝ հոգևոր կյանքն ու մշակույթը երբեք առանձին հանդես չեն եկել, դրանք զուգընթաց են հասունացել, ավելին՝ մինչ մշակույթի աշխարհիկացումը, այն եղել է հոգևոր կյանքում մեր հավատքի անբաժան մասը:

Խոսելով ժամանակակից աշխարհում առկա մարտահրավերների մասին՝ Տեր Զարեհը նկատեց՝ միակ բանը, որը հնարավոր չէ կեղծել, ստեղծագործական միտքն է. դրա վկայությունը ներկայացված աշխատանքներն են:

«Այագան ստեղծագործական միտք ունեցող մարդուն է, և, չնայած, գիտությունն այսօր արհեստական բանականության հաշվին է նաև գործում, սակայն ստեղծագործական միտքը ոչ մեկը չի կարող կեղծել: Ձեր առաքելությունն Աստծո ա-



րարչագործության շարունակականությունն ապահովելն է», -նշեց Տեր Զարեհ քահանա Աշուրյանն ու հավելեց՝ ստեղծագործական միտքն Աստծուց տրված շնորհ է, ներշնչանք, ինչին հնարավոր չէ տիրանալ: Ցուցահանդեսին ներկա էին բուհի ղեկավար և դասախոսական կազմը, հյուրեր ուսանողներ:

ՀՊՄՀ ռեկտոր Սրբուհի Գևորգյանը ցուցահանդեսը համարեց Գեղարվեստական կրթության ֆակուլտետի հերթական ծեռքերումը՝ ուսուցանող, լի հոգևոր արժեքա-նությամբ, մեր օրերում կենսակերպային ամիրաժեշտություն:

Պրոֆեսոր Գևորգյանը խոսեց ժամանակակից մարդու հոգեկանի ակտիվության աղբյուրների, մշակութային պահանջ-մունքների, այսօրվա աշխարհի բազ-

մաբևեռ մոտեցումների, էթնոմառանգության մասին՝ ընդգծելով՝ հոգևորն է սնուցման այն աղբյուրը, որի վրա երիտասարդը կարող է կառուցել իր ճանապարհը դեպի օրյեկտիվ իրականություն և դրանում գտնել իր տեղը:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի ղեկան Արա Դակոբյանն էլ ներկայացրեց ցուցահանդեսին ներկայացված աշխատանքները՝ ընդգծելով դրանց զգայական, խոհական կողմն ու նշեց՝ արվեստի այս եզակի նմուշներն իրենց ուրույն տեղը կգտնեն ցուցասրահում:

Ցուցահանդեսին հնչեց նաև հոգևոր երաժշտություն. ելույթ ունեցավ Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս Մարիաննա Ավետիսյանը:

Մարին ԱՂԵԿՅԱՆ



«Հոգեբանության զարգացման հեռանկարները Հայաստանում». հանրապետական գիրաժողով Մանկավարժականում



➤ 1 յան ամբիոնի վարիչ Լիլիթ Լաչինյանը: Նա հանգամանորեն խոսեց հոգեբանության ոլորտում գիտնականի թողած մեծ ավանդի մասին, ինչպես նաև գիտական գրականության ասպարեզում թողած մեծ ժառանգության մասին՝ մենագրություններ, բուհական դասագրքեր, ուսումնական ծեռնարկներ, գիտական հոդվածներ:

«Խորհրդային Հայաստանում Հոգեբանության առաջին ամբիոնն իր ուսերին

կանությունները վստահվեցին Սկրտիչ Արամի Մազմանյանին»:

Գիտնականի հեղինակած գրականության մեջ հատկապես հիշատակելի են «Ձեռնարկ հոգեբանության» (Եր., 1939)՝ որպես բուհական առաջին հոգեբանական դասագիրք, «Ուրվագծեր հոգեբանությունից» (Եր., 1951)՝ որպես զգայական ճանաչողության մասին եզակի աշխատություն, և շատ այլ արժեքավոր գրքեր:

Ակադեմիկոսի ուսումնասիրությունները ժամանակի խորհրդային հայտնի հոգեբանների կողմից դիտվել են որպես հոգեբանական գիտության մեջ տեսական-մեթոդաբանական մեծ ներդրում և մեթոդոլոգիական մեծ ներդրում հոգեբանական պատմագրության մեջ:

Հենց Սկրտիչ Մազմանյանն էր, որ 1965-ին ամբիոնի և Հոգեբանության պրոբլեմային լոբբրատորիայի մասնագետների ջանքերով Հայաստանում հիմնադրեց ա-

ռաջին հոգեբանների միությունը:

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կամո Վարդանյանի գեկուցումը վերաբերում էր հոգեբանական մտքի զարգացմանը և խորհրդային Հայաստանում: Ուսումնասիրությունը իրականացվել էր պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանի հետ համատեղ:

Կամո Վարդանյանն անդրադարձ արեց նախկին խորհրդային երկրում գիտությունների զարգացման և նրանով պայմանավորված խորհրդային Հայաստանում գիտական ողջ պոտենցիալի կենտրոնացմամբ հայրենական գիտության զարգացմանը:

Կարդանյանը ներկայացրեց հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՍՄՄ ՍԳԱ իսկական անդամ ՀԽՍՀ գիտությունների վաստակավոր գործիչ Սկրտիչ Մազմանյանին որպես ժամանակի ճանաչված և ընդունված հոգեբան գիտնականներից մեկը, որն զբաղվել է ստեղծագործական հոգեբանությամբ՝ հոգեբանության տեսության և պատմության հարցերով, մասնավորապես ստեղծագործական գործընթացում անգիտակցականի ունեցած նշանակությամբ:

1957 թվականին Արա նախաձեռնությամբ Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում բացվել է հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա, 1967-ին ընտրվել է ԽՍՀՄ Մանկավարժական գիտությունների ակադեմիայի անդամ, երկար տարիներ գլխավորել է

Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի հոգեբանության ամբիոնը և զգալի ներդրում ունեցել ոլորտի կարգերի պատրաստման գործում:

Ձեկուցողն անդրադարձավ ժամանակի հոգեբանական դպրոցի երախտավորներին, որոնք այդ ժամանակաշրջանի նպաստավոր պայմանները լավագույնս ծառա-



կրեց հայ հասարակությունում հոգեբանական մտքի զարգացման կարևոր ատաքելությունը, -ասաց Լիլիթ Լաչինյանը: -Խորհրդային ակադեմիկոսի հոգեբան Սերգեյ Ռուբինշտեյնի ասպիրանտ Գայանե Հովսեփյանից հետո ամբիոնի վարիչի պարտա-



յեցրին Հայաստանում հոգեբանական գիտության զարգացմանը՝ ապահովելով նրա հետագա կայուն զարգացումը:

Գիտաժողովը հագեցած օրակարգ ուներ, բոլոր 14 զեկուցումներում վերհանվեցին ոլորտի մերօրյա հրատապ հիմնախնդիրները, զեկուցողները փորձեցին լուծումներ առաջարկել:

Սիլվա ԱՍՐՅԱՆ



Պրոֆեսոր Սուրեն Դանիելյանն արժանացել է դրամաշնորհի

ՀՀՄՀ Վաչե Պարտիզոնու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն Սուրեն Դանիելյանն արժանացել է դրամաշնորհի:

Կայացել է «Թարգմանական ծրագրեր և աջակցություն ստեղծագործողներին ու հետազոտողներին» միջոցառման 2025 թվականին դրամաշնորհի ստացողների ցանկը ձևավորող խորհրդի ամփոփիչ նիստը

Պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը դրամաշնորհի է արժանացել «Միջուկի տրոհումը. սփյուռքահայ գրականության պատմություն» (գիրք 2) թեմայի համար՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ծրագրի շրջանակներում:

Դուկոր Նիկոլա Դիվանիի դասախոսությունը



Մանկավարժական համալսարանում էր Շվեյցարիայի Լյուցեռնի համալսարանի դասախոս, շվեյցարական Պարալեգիայի հետազոտական կենտրոնի ավագ հետազոտող Նիկոլա Դիվանին:

Դուկոր Դիվանին բուհում էր «Առողջապահական համակարգերի գիտելիքների յուրացման» մոտեցման կիրառումը՝ վերականգնողական աշխատանքների միջոցով առողջ ծերացմանը նպաստելու համար ծրագրի շրջանակներում: Այն անցկացվում է Շվեյցարիայի Լյուցեռնի համալսարանի հետ համատեղ:

Ինտերակտիվ դասախոսություններ, դեպքի ուսումնասիրությունների վերլուծություն, խմբային քննարկումներ, գործնական վարժություններ. վերապատրաստումներին մասնակցում էին առողջապահական, սոցիալական, կրթական ոլորտների ներկայացուցիչներ:

Առողջապահական հաղորդակցության և ապացույցների վրա հիմնված քաղաքականության մշակման ոլորտի մասնագետը ներկայացրեց «Քաղաքականության ամփոփագրերի մշակում և շահակիցների երկխոսություն վերականգնողական աշխատանքներում որոշումների կայացմանն աջակցելու համար» դասընթացը:

Նիկոլա Դիվանին նշեց՝ դասախոսությունը միտված է ներկայացնելու քաղաքականության ամփոփագրի նպատակն ու կառուցվածքը՝ մասնակիցներին հնարավորություն տալով ծրագրի ավարտին սահմանել քաղաքականության ամփոփագրի նպատակը, նույնականացնել հիմնական քաղաքիչները, գնահատել արդյունավետ և անարդյունավետ քաղաքականության ամփոփագրերը:

Անդրադառնալով դրանց արդյունավետ մշակմանը՝ Նիկոլա Դիվանին խոսեց քաղաքականության

ամփոփագրերի ներածության, լսարանի և շահագրգիռ կողմերի կարիքների ընթացման, խնդրի ազդեցիկ ձևակերպման և ապացույցների ինտեգրման մասին:

Նա նաև ներկայացրեց հարմարեցված հաղորդագրությունների օրինակներ, տվեց շահագրգիռ կողմերի հետ հիմնական խորհուրդներ, ապա ինտերակտիվ ձևաչափով անցկացրեց շահագրգիռ կողմերի քարտեզագրման վարժություններ և հարց ու պատասխանի միջոցով ամփոփեց ներկայացված նյութը:

Դուկոր Դիվանին, անդրադառնալով խնդրի ազդեցիկ ձևակերպմանը, խոսեց նաև քաղաքականության ամփոփագրերում դրա դերի, խնդրի ձևակերպման նախնական տարբերակների մշակման և գործընկերների հետ վերանայման, ըստ առաջնահերթության և կարևորության հարցերի ներկայացման մասին:

Շվեյցարիայի Լյուցեռնի համալսարանի դուկորն իր դասընթացի շրջանակներում ներկայացրեց նաև քաղաքականության ամփոփագրերում հետազոտական ապացույցների ներառումը, խոսեց արդյունքների ընտրության և ներկայացման, տվյալների չափազանց մեծ ծավալից խուսափելու և տեղեկատվության պարզեցման, ապա փորձնական տվյալների օգտագործմամբ ապացույցների համակցման վարժություններ կատարեց:

Նշեմք, որ «Քաղաքականության ամփոփագրերի մշակում և շահակիցների երկխոսություն վերականգնողական աշխատանքներում որոշումների կայացմանն աջակցելու համար» դասընթացի շրջանակներում վերապատրաստումները շարունակվեցին նաև հաջորդ օրը:

Մարին ԱՐԵԿՅԱՆ

ԿԻՄԱ ԹԱԹՈՒԻ ԿԱՐԱԽԱՆՆՅԱՆ.

Մանկավարժականի պարզացման ընթացքի ուղեկիցը

ՀՀՄՀ Հատուկ բաժնի պետ Կիմա Թաթուլի Կարախանյանը երկար ու ծիգ տարիներ մեծ նվիրումով աշխատում է Մանկավարժականում: Մինչ այսօր հիշում է մորական պապի՝ Մնացական Մուրադյանի թախտոտ պատմությունները: Պապը, որ ծնվել էր Վանի նահանգի Մանդան գյուղում, 1915 թվականին, 18-19 տարեկանում, Եղեռնից մազապրոծ հասել է Երևան, որտեղ էլ հիմնել է իր ընտանեկան օջախը: Նրա աչքի առաջ, Վանի Մանդան գյուղում, սպանել են բոլոր հարազատներին՝ 20 հոգու:



Ապա Ամերիկյան որբանոցում նա գտել է միակ փրկված հարազատին՝ քրոջ տղային, որը հետագայում հայտնի գեղանկարիչ դարձած Հմայակ Ավետիսյանն էր: Հմայակ Ավետիսյանի ու նրա կնոջ հորդորով էլ Կիման հայտնվել է Մանկավարժական ինստիտուտում, որը դարձել է իր երկրորդ տունը:

Տիկին Կիման հպարտությամբ պատմում է, որ մյուս պապը՝ Ստեփանը, եղել է Գարեգին Նժդեհի հավատարիմներից, նրա հետ մասնակցել է հայրենիքի ազատագրական պայքարին. ցավոք 1937-ին շատ-շատերի հետ նրան էլ սպանել են՝ պիտակավորելով հակահեղափոխական և ազգայնամուլ:

Տիկին Կիման աշխատանքային կենսագրությունն սկսել է Երևանի վիսամից գործարանից. լաբորանտ-ապարատավարը լավ աշխատանքի համար հենց այս գործարանում էլ արժանացել է մեդալի՝ առաջին աշխատանքային պարգևին:

Ավարտել է Երևանի քիմիական ուսումնարանը: Որպես Երևանի Դուկաս Դուկասյանի անվան պիոներական պալատի երգի-պարի խմբի սան՝ համերգներով շրջագայել է ԽՍՀՄ տարբեր քաղաքներում:

1970-ից Կիմա Կարախանյանը Մանկավարժականում էր. նա աշխատում է Հատուկ բաժնում, բաժնի հիմնադիր Նատալյա Անտոնյանի հետ՝ որպես քարտուղար, ապա տեսուչ, ավագ տեսուչ, իսկ 1990-ականներից՝ Հատուկ բաժնի պետ: Եվ արդեն շուրջ 55 տարի, տարբեր սերունդների հետ, նա Մանկավարժականում կերտում է իր աշխատանքային կենսապատմությունը, այդ ընթացքում աշխատելով 10 ռեկտորի հետ:

Աշխատանքին զուգահեռ, նա ընդունվում է բուհի Նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության ֆակուլտետի հեռակա բաժին:

Պետք է նշել, որ Հատուկ բաժնի բուհի կարևոր ստորաբաժանումներից է, որի հիմնական գործառնությունն են տղաների հաշվառումը, աշխատանքը ՀՀ զինվորախառնակների հետ, ներքին և արտաքին փաստաթղթային աշխատանքը համալսարանի և տարբեր կազմակերպությունների հետ:

Տարիները կարծես թե չեն փոխել ամենուր և մշտապես հասարակական ակտիվ աշխատանքով աչքի ընկած Կիմա Կարախանյանին: Հարազատ բուհի զարգացման ընթացքին ուղեկից, աշխատանքային նվիրումը ասարելու կերպ դարձրած Կիմային արժանացրել են տարբեր մեդալների և պատվոգրերի:

Այսօր էլ նա աշխատում է նույն եռանդով ու նվիրումով, համալսարանում բոլորն են ճանաչում սիրալիք ժպիտով բոլորին ճանապարհող տիկին Կիմային:

Երևանում, մտավորականի՝ բժշկի և ինժեների ընտանիքում ծնված Կիմա Կարախանյանը շարունակել ու պահպանել է ընտանեկան ավանդույթները. երկու զավակներն էլ՝ Գագիկը և Թաթուլը, ավարտել են Մանկավարժականը, Թաթուլը Մանկավարժականում շարունակել է նաև ասպիրանտուրան:

Ունի 4 թոռնիկ և այսօր հպարտանում է իր զավակներով ու թոռներով՝ նուրբ իմաստավորելով իր կյանքի ամեն օրը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ցուցադրություն Հունգարագիտության կենտրոնի նախաձեռնությամբ



Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի և Հունգարական կենտրոնի նախաձեռնությամբ մարտի 14-ին բացվեց ցուցադրություն, որը նվիրված էր 1848-1849 թվականների հունգարական հեղափոխությանը: Ցուցադրության նյութերում և նկարներում ներկայացված էր հայերի ակտիվ մասնակցությունն ու պայքարը հունգարական բռնապետության դեմ:

Հունգարագիտության կենտրոնի ղեկավար Դանիել Գադգիկը ընդգծեց, որ ցուցադրությունը ոչ միայն անցյալի, այլև ապագայի մասին է՝ հաստատելով հայ-հունգարական դարավոր կապերը:

Հրավիրյալ դասախոս Դանիել Գադգիկը նաև բուհի գործընկեր Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանի Հայագիտության ամբիոնի ասպիրանտ է: Նա ներկաներին առաջարկեց ընթերցել ներկայացված նյութերը, գրքերը և ընդգծեց, որ դրանք ոչ միայն Հունգարիայի, այլև հայոց պատմության մասին են, որում մասնավորապես տեղ են գտել նաև նյութեր դասական

պիտուքի համայնքներից մեկի՝ Տրանսիլվանիայի և այնտեղ ապրող հայերի մասին, նրանց դերակատարմանը Հունգարիայի տնտեսության մեջ, ինքնությունը պահպանելուն միտված ջանքերին, մշակութային հարուստ ժառանգությանը:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի ղեկան Էդգար Հովհաննիսյան

նր խոստովանեց՝ տարիներ առաջ անհավանական էր համարում, որ երկու երկրներում կհիմնադրվեն հայագիտության ամբիոն և Հունգարագիտական կենտրոն: Այսօր այդ ամենն իրականություն է. 10 ուսանող Հունգարագիտական կենտրոնում սովորում է հունգարերեն, ուսումնասիրում պատմությունն ու մշակույթը, իսկ Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտն էլ, որն ուսանել է Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանում, նորագույն Հայաստանի պատմության մեջ առաջինը գիտականորեն կուսումնասիրի հայ-հունգարական հարաբերությունները:

Դեկանն ուսանողներին հորդորեց՝ օգտվել բացառիկ հնարավորությունից և Հունգարագիտական կենտրոնում հունգարերեն սովորել անվճար:

Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանում մագիստրոսական կրթություն ստացած, այսօր արդեն ՀՀՄՀ ասպիրանտ Տաթև Արշակյանն էլ կարևորեց կենտրոնի գործունեությունն ու հունգարերենի իմացությունը, որը ապագայի համար նոր հնարավորություններ կընձեռի ուսանողներին:

«Բուհի գիտակրթական կյանքում նման նախաձեռնությունը ողջունելի է», -ասաց ՀՀՄՀ Աշխատակազմի և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Մարիաննա Հարությունյանը՝ միաժամանակ ընդգծելով կենտրոնի կարևորությունը համալսարանի կյանքում՝ որպես երկու երկրների միջև վերականգնված հարաբերությունների խորհրդանիշ: Պրոռեկտորը ուսանողներին հորդորեց ակտիվորեն մասնակցել Հայաստանից դուրս հայկական հետքերի բացահայտմանը, երկրից դուրս նրանց գործունեությանն ու դերակատարմանը, ինքնության պահպանմանն ուղղված ջանքերին, վեր հանելով պատմական կարևոր փաստեր՝ փոխանցել հաջորդ սերունդներին:

Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի ղեկան Էդգար Հովհաննիսյան



Վլադիմիր ԿԱՐԱՊԵՏՅԱՆ. Հոգեբանական գիտությունների դոկտոր, Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր, հոգեբանական գիտությունների միջազգային ակադեմիայի իտալական անդամ:

1964-1969 թթ. սովորել և ավարտել է ԽՍ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը, 1969-1970 թթ. սովորել է Դոնի-Ռոստովի պետական համալսարանի Կենսաբանության ֆակուլտետում, 1978-1981 թթ.-ին՝ Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Հոգեբանության ֆակուլտետի ասպիրանտուրայում, 1981 թ.-ին Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 1999 թ. Վրաստանի ԳԱԱ Դ. Ուզնաձեի անվան հոգեբանության գիտահետազոտական ինստիտուտում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն:

Տարբեր տարիների մասնակցել է Կիևի ինժինեռա-շինարարական ինստիտուտի, ապա Ռիգայում կազմակերպված միջազգային դասընթացներին:

2003 թ. նշանակվել է ՀՊՄՀ Հոգեբանության պրոբլեմային լաբորատորիայի վարիչ,

2010 թ. ընտրվել Տարիքային և Մանկավարժական հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնում:

Այժմ ՀՊՄՀ «Գիտական տեղեկագիր» պարբերականի գլխավոր խմբագիրն է:

400-ից ավելի գիտական հրատարակումների հեղինակ է, տարբեր երկրների 12 գիտական խորհուրդների անդամ, նախաձեռնել և մասնակցել է հանրապետական և միջազգային գիտաժողովների:

Վլադիմիր Կարապետյանի հետ զրուցել ենք հոգեբանական գիտության մեթոդային խնդիրների շուրջ:

-Հոգեբանության ոլորտում մեզանում ի՞նչ ուղղություններ են զարգացած և դրանց ազդեցությունը մեր համալսարանում իրականացվող հոգեբանական կրթության վրա:

-Եթե փորձենք վերլուծել հոգեբանության զարգացման ուղղությունները համրապետությունում, պետք է ասեն, որ ակադեմիական ինստիտուտ չունենալու պատճառով հոգեբանությունը զարգանում է բուհական ֆակուլտետների և ամբիոնների մակարդակով: Հոգեբանության ֆակուլտետներ և ամբիոններ ունեցող բուհերում յուրաքանչյուրը որոշում է զարգացման ուղղությունները, ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզերի թեմաները: Շատ բուհեր ունեն իրենց պարբերականները, որտեղ հրատարակում են հոդվածներ: Խնդիրն այն է, որ յուրաքանչյուրն առաջ է տանում իր մագիստրոսական ուղղությունը, և այդ հիմքի վրա չի կազմավորվում, թե որն է Հայաստանի հոգեբանական ա-



«Շուկայական հարաբերությունները և բարոյական դաստիարակության խնդիրները չեն համապատասխանում իրար»,-

ԱՍՈՒԻ Է ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈԳՆՈՐ ՎԼԱԴԻՄԻՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ

ռաջնային ուղղությունը, որոնք են զարգացման միտումները և այլն:

-Նախկինում փո՞րձ չի արվել ստեղծելու հոգեբանության հանրապետական կենտրոն:

- Փորձեր արվել են, բայց ծախսով էլ է հենց տեղի ուժերի կողմից: Եվ ստիպված այդ գիտությունը զարգացել է հոգեբանական լաբորատորիաներում, որոնք դարձել են հետազոտական կենտրոններ: Որքանո՞վ է մեկը մյուսի հետ ընկալելի. դա հասկանալի է այն չափով, որ նրանք ուսումնասիրում են մարդու կենսագործունեության տարբեր ոլորտներ, մեկը ուսումնասիրում է կլինիկա, մյուսը՝ իրավաբանական հոգեբանություն և այլն:

-Եթե դա տեղայնացնենք մեր համալսարանի օրինակով...

-Եթե վերադառնանք մեր բուհի առաքելությանը՝ շրջանակը նեղանում է այն չափով, որ այն պետք է ծառայեցվի կամ զարգացման, կամ տարիքային խնդիրներին և այլն: Չնայած հնարավոր է զարգացնել մյուս ուղղությունները ևս, բայց համալսարանի առաքելությունը պայմանավորված է կրթական համակարգին վերաբերող հոգեբանական ուղղությունների զարգացմամբ:

-Թերևս դա տեղին է, որովհետև այսօր կրթական համակարգը լի է բազմաթիվ հոգեբանական հիմնախնդիրներով:

-Այո, կրթական համակարգն այսօր լի է բազմաթիվ հոգեբանական հիմնախնդիրներով: Համաշխարհային պրակտիկայում այսօր արձանագրված է, և կան նաև լավ ուսումնասիրություններ, ըստ որի՝ ինչպես կյանքի տարբեր բնագավառներ, այնպես էլ կրթությունն ապրում է ամենածանր ճգնաժամը, գրքեր էլ են հրատարակվել, ինչպես օրինակ «Кризис в образовании»: Պետք է հավելեն, որ այդ ճգնաժամը ավելի շատ ակնառու է տնտեսապես թույլ զարգացած երկրներում:

-Ի՞նչ է արվում այս ուղղությամբ հանրապետության համալսարաններում և մասնավորապես մեր բուհում:

-Պետք է ասել, որ փոքրիկ մեր հանրապետությունում գոյություն ունեն նաև տարբեր երկրների բուհեր, որոնք սերունդի պես քաշում են պատրաստակամություն ունեցող ուսանողներին, և պարզ է, որ մյուսները տեղավորվում են տեղական բուհերում: Ցավոք, մեր բուհերն էլ կրկնում են մեկը մյուսին, և տեղական կարողային ռեսուրսը գերադասություն է տալիս:

Վերադառնանք մեր առաքելությանը: Ժամանակնե-

րը փոխվել են, և մենք գործ ունենք նոր սերնդի հետ, նոր նախադրոշմայիններով, որոնք թվային աշխարհում են ապրում, ապրում են սոցիալական ցանցերում, նաև ծնողները: Մի կողմից դա առավելություն է, որ նրանք բավականին նյութ են ստանում, մյուս կողմից՝ տվյալ տարիքին համապատասխան որոշ կաշկանդումներ կարող են լինել, ասել է թե կարող են պատահական էներ բացել, որի արդյունքում դաստիարակության գործընթացը խաթարվում է, քանզի խառնիխուռն այդ ինֆորմացիայի մեջ այսօր ամեն ինչի հեշտ ընկալվող են վերցնում, մակերեսային երևույթները, որը չի տալիս խորքային մտածելակերպ:

-Այդ առումով ի՞նչ պետք է անի Մանկավարժական համալսարանը, այստեղ արդեն ո՞րն է նրա դերն ու խնդիրը:

-Մանկավարժական համալսարանը պետք է մտածող ուսուցչի կերպար ձևավորի, ինֆորմացիոն այս դաշտում մենք ինֆորմացիայի կարիք չունենք, բոլոր տեխնոլոգիաները մշակված են, պետք է սովորել դրանք տեղափոխել ուսումնական գործընթաց, բայց ինչպե՞ս դրանք ստեղծագործաբար կիրառել՝ արդեն լուրջ խնդիր է: Այսինքն, փոքր երկրները պետք է ավելի շատ ուշադրություն դարձնեն մտածող աշակերտի, նախադրոշմային, ուսանողի կերպարի ձևավորմանը: Իսկ մտածող աշակերտի, ուսանողի ուսուցիչն ու դասախոսը ևս մտածող են: Այս հարցի պատասխանը միանշանակ չկա: Կան մարդիկ, որոնք հետևում են ժամանակի պահանջներին, մեծամասնության առումով այդ սոցիոլոգիան ինձ հայտնի չէ, թե պրակտիկորեն հետևում են իրենց բնագավառի զարգացումներին...

- Մանկավարժական ի՞նչ խնդիր է հետամտում կամ ինչպես է փոխներգործում այլ երկրի հետ:

-Մենք շատ մեծ կապեր ունենք և՛ տեղական, և՛ միջազգային բուհերի հետ: Միջազգային հարթակում միշտ չէ, որ ստորագրված պայմանագրի բոլոր կետերն են իրականացվում: Օրինակ կարդերի պատրաստում այլ բուհերում, մագիստրոսական թեզի ղեկավարի ընտրություն այլ բուհերից... Այստեղ ավելի շատ խանգարող հանգամանք է լեզվի իմացությունը: Մենք մեկ տարի այդ պրակտիկան ունեցանք՝ ռուսաստանյան բուհի հետ փոխադարձաբար թեզեր ղեկավարեցինք, և շատ լավ էր: Հաջորդ հարցը՝ կապված հոգեբանության զարգացման հետ, պայմանավորված է նրանով, թե մենք հոգեբանությունը ինչպես ենք դիտարկում. եթե մենք այն դիտարկենք միայն որպես հումանիտար գիտություն, որպես հասարակական գիտություն, մենք զբաղվելու

ենք նկարագրական բնույթի առաջադրանքներով, բայց իրականում նա մի քանի գիտությունների հիմքի վրա է զարգանում՝ և՛ բնագիտության, և՛ կենսաբանության, և՛ փիլիսոփայության: Անհրաժեշտ է այն, ինչ դասախոսն ասում է լսարանում, հնարավորություն ունենա ցույց տալ նաև լաբորատոր պարապմունքներին: Այդ հազցվածությունը դեռևս պակասում է մեզանում, բայց կարծում են առաջիկայում միտում կա այդ բացը լրացնելու:

-Ի՞նչ կասեք դպրոցներում գործունեություն իրականացնող հոգեբանների գործառույթների մասին՝ հատկապես դաստիարակության մեթոդային խնդիրների առկայության պայմաններում:

-Շատ բարդ է. աճող սերունդը նոր պահանջներ է դնում և՛ թվայնացման, և՛ սոցիալ-տնտեսական պատճառներից ելնելով, և նրա համար շատ ավելի առաջնային է իրավիճակային զգացմունքներ ստանալ այդ պահին, քան դասը կամ նրա արդյունքն է: Ահա ինչու մենք նկատում ենք շեղվող վարքի բազմաթիվ դեպքեր: Մյուս կողմից, ծնողները հակված են ավելի շատ հետևել երեխայի գնահատականներին, ինչը նկատելի է նաև բուհական համակարգում:

80-ական թվականներին այդ հարցը քննարկվել է մեծաթվաքանակով երկրներում, պատրաստեցին դպրոցական հոգեբաններ, սովորեցրին տարբեր տարիքի երեխաների հետ ինչպես պետք է աշխատել, նրանց հետաքրքրությունների շրջանակում հաճախ հանդիպող դժվարությունները որոնք են՝ ուշադրության, հիշողության, մտածելակերպի, վարքի... Այնուհետև ռուսներն անդրադարձան այդ հարցին՝ «Вопросы психологии» ամսագրում ծավալելով լայն քննարկում: Այսքան տարիներ անց այդ խնդիրը դրվեց նաև Հայաստանում հենց այն պատճառով, որ դպրոցներում դաստիարակության գծով հաստիքներ չկան, ի միջի այլոց ռուսական բուհերում անգամ կան դաստիարակության գծով պրոբլեմատորներ: Մենք կարծում ենք, որ մեր աշակերտները դաստիարակված են, բայց պատկերը այլ բան է ցույց տալիս:

Դպրոցական հոգեբանին պատրաստելը պետք է լի-նի բակալավրի մակարդակով. դա գործնական հոգե-

բանությունն է կամ դպրոցական հոգեբանությունը: Անշուշտ, վերականգնման խնդիր կա. այդ հարցը պետք է դրվի նախադրոշմային տարիքից: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ուսումնական դժվարությունների 50 տոկոսը գալիս է նախադրոշմային տարիքից:

-Որո՞նք են ճգնաժամին բնորոշ հակասությունները:

-Հակասությունը նրանից է, որ կրթական ծրագրերը պատրաստելիս բոլոր բաղադրիչներին հավասար ուշադրություն է դարձվում, ճգնաժամի մեջ նշված է՝ տվյալ մասնագիտության շրջանակում կան հասարակական, բնագիտական, ճշգրիտ առարկաներ, և ամեն դասախոս ուզում է, որ առավել հնարավորություններ ստեղծի իր առարկան ուսումնասիրելու համար, մինչդեռ կարող է այդ առարկայի կարիքը կամ քիչ է, կամ ընդհանրապես չկա:

Շատ կարևոր են նաև վերապատրաստումները. խորհրդային տարիներին վերապատրաստումների տևողությունը շատ մեծ էր, ինչը չես ասի մեթոդային վերապատրաստումների տևողության մասին: Եվ ահա կրթական ծրագրերը հետ են մնում:

Այս պայմաններում դժվար է պատրաստել որակյալ հոգեբան՝ դպրոցներում աշխատելու համար, որովհետև և տարիքային խնդիր կա՝ հոգեբանը պետք է կարողանա բոլոր տարիքի երեխաների հետ աշխատել, իսկ գործնականում հնարավոր չէ պատրաստել հոգեբաններ յուրաքանչյուր տարիքային խմբի համար: Եվ ահա նրանք հիմնականում աշխատում են վարքի խանգարումներով երեխաների հետ, թե երեխան ոնց է սովորում, առանձնապես հետաքրքիր չէ ոչ մեկին:

-Իսկ ո՞ր բուհերի հետ եք համագործակցում արդի խնդիրների շուրջ:

-Երբ նախադրոշմային ամբիոնի վարիչ էի, մեզ հաջողվեց ռուսական «Дошкольная образования» (Նախադպրոցական կրթություն) ամսագրի երկու համարում ամբողջովին տպագրել մեր ամբիոնին նվիրված հոդվածներ. ես դա համարում եմ բացառիկ գործ: Այնուհետև մանկավարժական պրակտիկայի արդիականացմանը նվիրված միջազգային գիտաժողով արեցինք, որին մասնակցեցին ոլորտի ճանաչված մասնագետներ:

Այնպես է ստացվել, որ ավելի շատ ես համագործակցում եմ միջազգային գործընկերների հետ. 8 ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ եմ, գրախոսություններ են գրում, թեզերի վերաբերյալ >7



«Շուկայական հարաբերությունները և բարոյական դաստիարակության խնդիրները չեն համապատասխանում իրար»

Կարծիքներ: Գետնուսում են միջազգային մասնուլիմ: Այսօր լուրջ հետազոտություններ են պետք, բայց համակարգումը չկա, որ յուրաքանչյուր ամբիոն հստակ ասի՝ ինչ պրոբլեմով է զբաղվում: Ամեն դասախոս թող զբաղվի իր նախընտրած սիրողական թեմայով, բայց, իմ կարծիքով, հանրապետության նշանակության կամ ամբիոնի կառուցում մեկ կամ երկու ընդհանուր թեմա պիտի լինի, մասնագիտական ուղղվածություն, որի հիման վրա կարող է կազմավորվել մանկավարժական համալսարանի ողջ գիտական պոտենցիալը:

Մենք Բոլոնիայի հռչակագրով մեր կրթական համակարգը ստեղծեցինք, բայց Եվրոպայի համալսարաններում ունեն դիմորդների մեծ թվաքանակ, և դասախոսը ծանրաբեռնված չի, մի քանի առարկա է սպասարկում, նրանք նաև ունեն դասախոսի խրախուսման մեխանիզմ: Ուսյն ամբիոնի դասախոսներն ստանում են տարբեր աշխատավարձ, դա վերաբերում է նաև ուսանողներին: Ավարտելով, ուսանողը գիտի, որ աշխատելու է, իսկ մեր ուսանողները հեռանկար չունեն, շատերը դիպլոմն ստանալուց հետո աշխատում են խանութներում:

Պետք է կարողանանք այս պատմեղը հաղթահարել, այսքան կարգեր ենք պատրաստում, բայց այսօր դպրոցն ուսուցչի կարիք ունի:

-Իսկ միզուցե՞ք ա՞յլ է խնդիրը:

- Խնդիրներից մեկն այն է, որ հանրապետությունում մասնագիտությունները կրկնվում են, օբյեկտիվ այլ պատճառներ էլ կան: Շուկայական հարաբերությունները և բարոյական դաստիարակության խնդիրները չեն համապատասխանում իրար, և ինչ-որ տեղ դառնում են իրարամերժ գաղափարներ: Պատճառներից մեկն էլ հեռանկարի բացակայությունն է:

Դասախոսություններից մեկի ժամանակ ինձ հարցրին՝ աշխարհում կա՞ մի համալսարան, որը կոչվում է *կյանքի համալսարան*: Իսկապես մենք պետք է կարողանանք նախապատրաստել կյանքին, ուսյնը վերաբերում է դպրոցներին: Այս համակարգը տալի՞ս է այդ մոտիվացիան...

Են կարծում են, որ Մանկավարժական կարգերի տեղավորումը մարզերում պետք է տրվի Մանկավարժական համալսարանին, յուրաքանչյուրի պրակտիկան էլ

պետք է կազմակերպել իր մարզում: Եվ յուրաքանչյուր տարվա համար իմանալ թե որ մասնագիտության ուսուցչի քանի տեղ է պետք լրացնել, այդքան մասնագետ էլ թողարկել:

-Իսկ որքանո՞վ է բակալավրի ավարտական թեզն արտահայտում շրջանավարտի գիտելիքները:

-Լավ հարց է: Ըստ Բոլոնիայի հռչակագրի մագիստրատուրայում պետք է հետազոտական գործունեություն ծավալել, բայց հետազոտությանը զուգընթաց պետք է նաև դասավանդել: Բոլոնիայի հռչակագրի դրույթներին զուգընթաց բակալավրիստն ավարտող ուսանողը պետք է որակավորման քննություններ հանձնի հիմնական առարկաներից: Ապագա ուսուցչի պատրաստվածությունը թեզով չպետք է չափվի:

-Պարոն Կարապետյան, մեզանում նկատելի է նաև, որ գերազանցությամբ ավարտողների թիվը մեծ է...

-Գերազանցիկ լինելը Մանկավարժականի փառք ու պատիվն է, բայց մենք դա չպետք է շռայլենք:

-Ուրիշ ինչի՞ մասին կուզեիք խոսել:

-Մի հարցի էլ կուզեի անդրադառնալ. հոգեբանության և մանկավարժության բոլոր թեկնածուական ատենախոսությունները, հատկապես մեթոդիկայի գծով, պարտադիր պետք է կատարվեն մեր համալսարանական դպրոցներում, մեր աչքի առաջ, և դպրոցն էլ կհարստանա մեթոդական նոր ուղեցույցներով:

-Որպես երկարամյա փորձառու դասախոս, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, այսօրվա կրթական համակարգի, հանրակրթության ի՞նչ մոդել կառաջարկեք:

-Այդ հարցին արդեն պատասխանել են կրթության ոլորտի փորձագետները, եթե կուզեք՝ կարող եմ ներկայացնել 12 լուծում նոր կրթության համար՝ աջակցել վաղ կրթությանը, դպրոցները հագեցնել թվային տեխնոլոգիաներով, դպրոցների նյութական ինֆրաստրուկտուրաները փոխել, ընդլայնել հնարավորությունները յուրաքանչյուր աշակերտի, ուսանողի համար, նոր տեխնոլոգիական կրթություն, տաղանդների զարգացում և համակողմանի աջակցում, շարունակական կրթության համակարգի կատարելագործում, բուհերը դարձնել նորարարական տեխնոլոգիաների կենտրոններ:

Համաշխարհային քննարկումների արդյունքում փորձագետները բացահայտել են նոր կրթության առաջնահերթ խնդիրը: Բայց այս ճգնաժամային փուլում չպետք է հիասթափվել կամ հուսահատվել, այլ զարգացման նոր խնդիրներ դնել:

-Իսկ ինչպե՞ս լուծել այդ խնդիրները, երբ դաստիարակությունը հետ է մնացել ուսուցումից. սա հոգեբանական լուրջ խնդիր չէ: Հասարակության մեջ լուրջ դեգրադացիա կա, որի անդրադարձը նկատելի է դպրոցներում, ուսումնական տարբեր հաստատություններում:

-Այո: Մեզ նման անցման փուլում գտնվող երկրներում բարոյական արժեքները դառնում է մեր ճակատագրական խնդիրը: Այս տեսանկյունից առաջնահերթ խնդիրն ընկնում է ընտանիքի վրա: Ընտանիքի դպրոցն այն աստիճանի կայացած չէ, որ երեխաների դաստիարակության խնդիրը ճիշտ դրվի: Հանրակրթական ուսումնական հաստատությունից գատ կարելի է խոսել նաև մեր ուսանողների՝ ապագա մանկավարժների մասին՝ ինչ են հագնում, ինչպես են պահում իրենց: Ապագայի ուսուցչի մտածելակերպի, վարքի, իրեն պահելու խնդիր կա:

Մանկավարժի առաքելությունը բարդ է, առաջիկայում էլ շարունակվելու է ճգնաժամը, եթե հասարակությունը չփոխի իր վերաբերմունքը ուսուցչի նկատմամբ, որպեսզի ուսուցիչը դառնա պաշտելի մարդ: Պետությունը պետք է առաջնակարգ համարի կրթությունը, որովհետև ամեն ինչ սկսվում և ավարտվում է կրթությամբ, իսկ կրթության համակարգում մանկավարժական կրթությունը պետք է դառնա երկրի ստրատեգիական խնդիրը:

Եվ որպեսզի դպրոցն ու բուհը իրար չմեղադրեն, ձեռք ձեռքի տված պետք է լուծեն բոլոր խնդիրները՝ մանկավարժական կրթությունը դնելով առաջին տեղում, որովհետև դա է երկրի ապագան: Այ այս հանրային ճանաչողությունը ուսուցչի դերի և մանկավարժի վերաբերյալ կարող է հավատ ու հույս ներշնչել ապագայի հանդեպ:

Հարցազրույցը՝ Սիլվա ԱՄՐՅԱՆԻ

Հանդիպման թեման երկրաշարժերն էին



Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի նախաձեռնությամբ Մանկավարժական համալսարանում էր ՀՀ ԼՂԻՍ սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության բնակչության հետ տարվող աշխատանքների վարչության պետ Սյուզաննա Կարայանը: Նա ուսանողների և աշակերտների առաջ հանդես եկավ «Սեյսմիկ պաշտպանության ոլորտում գիտելիքների և հմտությունների զարգացումը որպես սեյսմիկ ռիսկի նվազեցման բաղադրիչ» խորագրով զեկուցումով:

ՀՀԼՂԻՍ դասախոս Վարդուհի Հովհաննիսյանի հետ շարունակական համագործակցության շրջանակներում ապագա աշխարհագետների համար պարբերա-

բար կազմակերպվում են մասնագիտական այցելություններ Գառնիի դիտարան: «Արդեն ավելի քան 5 տարի Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետը համագործակցում է ՀՀ ԼՂԻՍ սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության, մասնավորապես Գառնիի սեյսմիկ դիտարանի հետ: Ուսանողները համար պարբերաբար այցել ենք կազմակերպում, որոնց հատկապես պրակտիկայի ընթացքում ներգրավվում ենք աշակերտներին: Այսօր էլ դպրոցականներ են եկել համալսարան՝ աշխարհագրության ուսուցչուհու հետ: Ստեղծել ենք բուհ-դպրոց-սեյսմիկ կայան կապը՝ հաշվի առնելով, որ դեռևս դպրոցական տարիքից, հետազայում նաև բուհում ու-

սանելու տարիներին նրանք ծանոթ լինեն երկրաշարժի ընթացքի ճիշտ վարքակցումներին, որի իմացության դեպքում կարելի է կյանքեր փրկել», -ասաց Վ. Հովհաննիսյանը:

Այս անգամ հանդիպման ձևաչափն այլ էր. հանդիպում ոլորտի մասնագետի հետ Մանկավարժական համալսարանում:

ՀՀ ԼՂԻՍ սեյսմիկ պաշտպանության տարածքային ծառայության բնակչության հետ տարվող աշխատանքների պետ Սյուզաննա Կարայանը խոսեց բնակչության տարբեր տարիքային խմբերի հետ սեյսմապաշտպանության թեմայով իրազեկման աշխատանքների իրականացման կարևորության մասին՝ սկսած նախադպրոցական տարիքից:

Ձեկուցողը շեշտադրումներ արեց պրակտիկ գիտելիքներին, որին տիրապետելն անհրաժեշտ է յուրաքանչյուրին, թեմայի շրջանակներում ներկայացրեց ընդհանուր տեղեկատվություն Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ վտանգի, սեյսմիկ ռիսկի մակարդակի, նրա շուրջ տարվող աշխատանքների մասին՝ կապված բնակֆոնդի, կառուցվող շենքերի ու շինությունների հետ:

Ձեկուցողը հանգամանորեն ներկայացրեց երկրաշարժերի թեման՝ անդրադառնալով աշխարհում և Հայաստանում սեյսմիկ գոտիների, սեյսմիկ ալիքների տեսակներին, երկրաշարժերի առաջացման պատճառներին, ըստ հայտնաբերվող նախաձայնների կանխատեսման հնարավորություններին և այլն: Նա տեղեկացրեց տեկտոնական, հրաբխային և փլուզումային երկրաշարժերի մասին՝ ընդգծելով, որ Հայաստանին սպառնում

են տեկտոնական երկրաշարժերը: Խորհրդային տարիներից մինչ այսօր ընդունված է երկրաշարժի ուժգնությունը չափել ըստ Ռիխտերի 12 բալանոց սանդղակի:

Ինչպես հայտնի է՝ աշխարհում 3 սեյսմիկ գոտիներ կան, որոնցից ամենաուժեղը Խաղաղ օվկիանոսյան Հրե գոտին է՝ 90 տոկոս, իսկ Հայաստանը գտնվում է Ալպ-Հիմալայան (Հայկական լեռնաշխարհ) գոտում, որտեղ երկրաշարժերի հավանականությունը 5-6 տոկոսի է հասնում: Սակայն, ինչպես տեսանք, Սպիտակի երկրաշարժը 10 բալ ուժգնություն ուներ, ընդ որում բալը երկրաշարժի որակական գնահատականն է, մագնիտուդը՝ անջատված էներգիան: Երկրաշարժերի ուսումնասիրման հարցերով է զբաղվում Գառնիի երկրաֆիզիկական դիտարանը: Հայաստանում երկրաշարժերի ռիսկը բարձր մակարդակի վրա է, ինչը պայմանավորված է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով:

Ձեկուցման թեման մերօրյա էր՝ շատ կարևոր ու անհրաժեշտ բոլոր տարիքի մարդկանց համար: Այս դեպքում համալսարանական դասիչումներն ուսանողներն ու դպրոցականները տեղեկացան Հայաստանում երկրաշարժերի ու նրանց կանխատեսման հնարավորության, երկրաշարժի ընթացքում իրենց վարքակցումների ու բազմաթիվ այլ կարևոր հարցերի մասին:

Դասիչումներ կան էին ֆակուլտետի դեկան Սիրինե Շողերյանը և դասախոսներ, որոնք հետաքրքիր հարցերով ակտիվացրին հանդիպումը:

Սիլվա ԱՄՐՅԱՆ



Տառաձանաչություն, որ սկսվում է Հայրենիքից



Մանկավարժական համալսարանի N 57 դպրոցի «Աստղիկներ» 1 բ դասարանի սաներն ավարտեցին իրենց կյանքի մի կարևոր և հրաշալի փուլը. նրանք տառաձանաչ դարձան և «Հայի լեզուն հայերենն է» ավարտական ցերեկույթով ամփոփեցին հայոց լեզվի, հայերեն տառերի ու հայրենիքի նկատմամբ իրենց սերը: Հայրենիքի սարերի, գետերի ու քաղաքների մասին երգ ու ասումներով փաստեցին՝ սիրով ու ջերմությամբ, գիտելիքներով են լցվել ողջ ուսումնական տարվա ընթացքում, և որ անդրանիկ ուսումնական տարին անմոռաց կմնա իրենց հուշերում. չէ՞ որ սովորեցին մետրայան այբուբենի ոսկեդեմիկ տառերը, որով շատ դժներ են բացելու...

Դասվար Տաթևիկ Աբրահամյանը ջանք չէր խնայել, որպեսզի փոքրիկների աշխարհաձանաչողությունն սկսվի հայրենիքից, որպեսզի նրանք հենց փոքրուց հասկանան ու ընկալեն՝ աշխարհի որևէ ծագում յուրաքանչյուր հայ չպետք է մոռանա իր լեզուն և իր հոգուն պետք է մշտապես գուրգուրի վերադարձի հույսն ու հավատը:

Եվ այբբենարանի ուսուցման ավարտին նվիրված ցերեկույթը սոսկ հերթական միջոցառում չէր, այլ Հայրենիքին նվիրված լուսե ծոց, հատկապես երբ այսօր կա Արցախի կորուստ, հետպատերազմյան տխուր իրականություն և աշխարհով մեկ սփռված հայություն:

Միջոցառումը ծայրե ի ծայր լցված էր հայրենիքի հանդեպ հայրենասիրությամբ ու հայրենակարոտ խոսքերով. առաջին դասարանցիների թոթովախոս լեզվի վրա Հայաստանն էր ու հայոց տառերը, որոնք ողջ ընթացքում հորդորում-հուշում էին՝ Հայրենիքը մեկն է, սուրբ է հայոց այբուբենն ու Հայրենիքի ամեն անկյունը:

Առաջին դասարանցի փոքրիկները տարբեր երկրներից «Հայի լեզուն հայերենն է, իսկ տունը՝ Հայաստանը» գիտաժողովի մասնակիցներին դիմավորեցին «Ձվարթնոց» օդանավայանում: Բայց պարզվում է նրանք օտարախոս հայեր են, ու երեխաները որոշեցին նրանց սովորեցնել հայոց տառերը և հորդորեցին չմոռանալ հայերենը, ուր էլ որ լինեն:

Այդ դասի «շրջանակներում» երեխաները փառաբանեցին հայրենիքի սարերն ու գետերը, հեռու ու մոտ Արարատը.

Արևը ջինջ երկնքից
Շենք բացվում է իմ առջև,
Մի հսկա սար միշտ հեռվից
Ինձ տալիս է ջերմ բարե:
Արարատն է, տե՛ս, բազմել
Մայր Արաքսի ափերին:
Մեր վեհ լեռը հեռացել,
Բայց մոտ է մեր սրտերին:

Բայց շուտով հասկացան, որ տառերը չկան, երկի խռովել են, որովհետև հազարամյակների միջով եկած մայրաքաղաքում այսօր իշխում է օտարախոսությունն ու օտարամոլությունը:

Հանկարծ դահլիճի մթության մեջ հնչեց. «Ես ստեղծեցի գրերը հայոց, որ ունենա հայը դպրոց, որ չծուլվի նա օտարին, որ արարի ու հավերժի...»: Այդ ձայնը սթափության կոչ էր՝ չտրվել օտարամոլությանը, պաշտել մայրենի լեզուն...

Երեխաները հասկացան՝ պետք է վերադառնալ արմատներին, գնալ դեպի ակունքները, ծանաչել Հայաստանի լեռներն ու գետերը, քաղաքներն ու շենքերը: Հենց այդպես էլ արեցին.

Հայոց շենքեր, մեր քաղաքներ,
Մենք երկար ենք ձեզ որոնել,
Վերադարձրեք տառերը մեր,
Որ սովորենք մենք հայերեն:

Փոքրիկները գիտեն՝ մեր լեզուն անցել է հազար փորձության բովով, որ պետք է գուրգուրել, փայփայել հայոց լեզուն, քանզի.

Մեր լեզուն մեր խիղճն է դա,
Սուրբ հացը մեր սեղանի,
Մեր հոգու կանչն է արդար
Ու համը մեր բերանի:
Մեր լեզուն ծուխն է մեր տան,
Մեր կշիռն աշխարհի մեջ,
Նա աղն է մեր ինքնության,
Էության խորհուրդը մեր:

Բոլոր տառերը գտան ու հայտնաբերեցին մի բան՝ այն, ինչ տվել է իրենց Այբբենարանը, անգնահատելի է, այն անցնելիք մաքրամաքուր ճանապարհի սկիզբն է...

«Մենք գործ ունենք սրբության հետ. մեր այբուբենը սուրբ է և այն պետք է տանենք մեզ հետ: Մեր դպրոցի սաներն այսօրվանից այդ դժվարին գործի կրողներն են դառնում, իսկ այդ գործուն չափա-

զանց մեծ է նաև մեր նվիրյալ դասվարների դերը: Նրանց շնորհիվ երեխաները կարծ ժամանակում, կարծես մի հրաշքով, դառնում են տառաձանաչ», -ասաց ՀՊՄՀ N 57 հիմնական դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը՝ շնորհավորելով աշակերտներին և դասվար Տաթևիկ Աբրահամյանին՝ ներկաներին իրենց տառաձանաչությանը նվիրված ման գեղեցիկ տոն պարգևելու համար:

Դասվար Տաթևիկ Աբրահամյանը, որ ամբողջ ուսումնական տարվա ընթացքում տառերի ուսուցման հետ հայրենասիրություն է սերմանել սաների մեջ, ասաց. «Հրաժեշտ Այբբենարանին» տոնը տոն է բոլորի՝ և՛ մեծերի, և՛ փոքրերի համար: Փոքրերն ուրախանում են, որ դարձել են տառաձանաչ, կարող են ինքնուրույն գրել ու կարդալ, իսկ մեծերը մանկանում են՝ հիշելով իրենց դպրոցական տարիները, առաջին դասագիրքը. «Այբբենարանին հրաժեշտ տալով մենք պարտավորվում ենք անարատ պահել հայոց լեզուն, հնարավորինս վերացնել օտար բառերը, որոնք, ցավոք, շատ ենք գործածում: Աշխարհասփյուռ հայերին էլ կոչ ենք անում չմոռանալ, որ հայի լեզուն հայերենն է»:

Դահլիճում ներկա ուսուցիչներն ու ծնողները հուզմունքով ու հպարտությամբ էին ըմբռնվում փոքրիկների ելույթները, ոգևորում էին ու ծափահարում, թերևս յուրաքանչյուրը մտովի հետ էր գնում դեպի իր մանկություն:

Սիլվա ԱՍՐՅԱՆ



Գիրը մեր ինքնությունն է

Տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի N 57 հիմնական դպրոցի 1ա «Ձանգակներ» դասարանի սաների գրաձանաչության Այբբենարան ավարտելու սպասված տոնը: Այն նշանավորվեց հետաքրքիր փորձություններով. թագավորը գողացել էր գիրը և թաքցրել, և այն գտնելու համար փոքրիկ «զանգակները» հաղթահարեցին բազում փորձություններ: Նրանք գտան այն թանկն ու նվիրականը, որ «գիր է կոչվում, լեզու պատվական»:

Փոքրիկները ներկայացնում են թագավորին, որը «գրագետ մարդու թշնամին է, և ոսկին է նրա միակ բարեկամը»: Բայց թագավորական պալատում բոլորը չէ, որ նագիր-վեզիրների ման հպատակ են. պալատականները ջանում են ամեն գնով փրկել «այն թանկը, որ կոչվում է գիր», քանզի սերնդեսերունդ փոխանցվել է այն, պահվել արյան գնով, և հիմա պետք է գտնել մի հնար: Ժողովրդին միաբանելու կոչ են անում պալատականները, հասկանալով, որ ազգապահպան լեզուն կամաց-կամաց հեռանում է, և որ՝ Պետք է միայն գրով կռվել,

Գրով փրկել երկիրը մեր:
Իմաստունն ու պալատականները իշխանին են կարգում արքա, որովհետև նրա օգնությամբ են գտնում գիրը, որի հետ «մեր երթն անկանգ ու անխաթար է»: Նրանք փառաբանում են հայոց գիրն ու լեզուն՝ «հզոր, առնական, մտքերի տաճար», որը լույս է տարածում...



Իմաստուններն էլ փաստում են՝ Գիրը մեր ինքնապաշտպանության Ձեռքն ու գրահն է:
Այն մեր ազգի հպարտությունն է,
Մեր սրբազան մայրենին:
Մեր ժողովրդի հարատև գոյության երաշխիքը,

Այն մեր ինքնությունն է:
Արքան էլ կարծես «դարձի է գալիս», հասկանում գրի ու լեզվի նշանակությունը, ուստի խնդրում է համալսարանական N 57 հիմնական դպրոցի տնօրենին, որ իրեն էլ դպրոց ընդունի, ապա խոստանում է լավ սովորել, ծառայել ժողովրդի:

Դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը շնորհակալություն է հայտնում դասվար Ազրաֆինա Հովհաննիսյանին՝ գրաձանաչ մեկ սերունդ ևս մեր ազգին պարգևելու համար, ընդգծելով գիտելիքի և գրաձանաչության անհրաժեշտությունը, որն ընկած էր այբբենարանի հրաժեշտին նվիրված միջոցառման առանցքում:

Մնում է «բյուր երգանքներով դեպի գալիք գնալ», սիրել դպրոցն, ուսուցիչներին՝ գիտելիքների անսպառ պաշարով հզորացնելու երկիր հայրենին: Տառաձանաչության դասն ավարտվում է փոքրիկների «անգիջուն պայքարով»՝ հանուն հայոց գրերի, հանուն Հայաստանի վաղվա պայծառ օրվա:

Սիլվա ԱՍՐՅԱՆ






Բարձր վարպետության մանրանկարները ազգային ավանդույթների ներկայացմամբ

ՀՊՄՀ-ի Լևոն Կոչոյանի անվան ցուցասրահ-ճեմասրահին այսուհետ կներկայանա 13-րդ դարի Կիլիկյան մանրանկարչական դպրոցի «Ավետում» և 14-րդ դարի Գլաձորի մանրանկարչական դպրոցի խոշորագույն ներկայացուցիչ Թորոս Տարոնացու մանրանկարների բարձր վարպետությամբ կատարված մեծաչափ կրկնօրինակների գարդարանքով: Հեղինակները Չեղարվեստական կրթության ֆակուլտետի մի խումբ դասախոս-արվեստագետներն են: Շուրջ երեք ամիս տևած ամենօրյա միջազգային աշխատանքի նպատակն ուսուցողական է և դաստիարակչական. այն կարևոր նշանակություն ունի բուհի մշակութային կյանքում:

Ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը նկատում է՝ աշխատանքները մեխանիկական կրկնօրինակում չեն. ներկայացված մեծածավալ գործերում փորձել են պահպանել բնօրինակը նույնությամբ:

Ազգային գարդարանախշերով և գունավոր քարերով

պատված փայտե շրջանակներն էլ առանձնահատուկ հմայք են հաղորդում պատկերներին, որոնք ինչպես նշում է պրոֆեսոր Հակոբյանը, արվեստի առանձին գործեր են և փայտի գեղարվեստական արվեստի մշակման բնագավառում ինքնատիպ երևույթ: Ինքնատիպ են նաև դեկորատիվ վարպետները, որոնց վրա պատկերված են հայ մանրանկարչական արվեստի տարբեր թեմաներ. «Բուհի դեկավար կազմի աջակցությամբ մնան զարդարանքով և գունագեղությամբ մի քանի խնդիր ենք փորձել լուծել. բացի այն, որ ապագա մանկավարժ-արվեստագետներին և ֆակուլտետի այցելուներին ծանոթացնում ենք ազգային ավանդույթներին, նաև գեղագիտական գարդարանքի շնորհիվ լուծում ենք ներքին ինտերիերի հարցը, ինչը հետագայում ուսանողները կփոխանցեն իրենց սաներին»:



ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԳՐԻՑ




Փրկությունը սերն է

Քներս, թե՛ կապված թներս են հարցեր բերում: Ասում ենք՝ գրականության մեջ չկան բացարձակապես դրական ու բացասական կերպարներ: Իսկ կյանքում՝ էս կյանքում ու կգոռամ, որ կան: Մանկան աչքից արցունք բերողի, մանկան մանուկ սրտի կապույտը պղծողի հավաքական կերպարն է՝ անսանձելի ու կատաղած, նախքան չանջերն ամեն տեղ զգող, սրբապիղծ: «Ինչու»-ների շարանն անհնար է կանգնեցնել: Կա՞ լուծում: Թող արհեստական, մեծադղորդ և պաթետիկ չինչի, բայց սիրտս ահագնազուն է, որ փրկությունը սերն է: Երբ պատերազմ չի լինում, հեշտ է շարտել ու իջեցնել «խաղաղություն» բառը բաժակաձևով մակարոնակի: Ողբերգական պահերին խաղաղությունը դառնում է միակ բաղձալի: Ամսեր աշխարհում ախր պիտի՝ զգանք սիրո կարևորությունն ու թողած դատարկությունը: Չենք զգում: Շարունակում ենք մախանձել, չարախոսել, անիծել, ատել: Չարացած ենք: Ես չեմ հավատում ու չեմ էլ կարող հավատալ, որ հայի սիրտը կարծրացած է, ոչ: Տերյանը հնչում է. «Շատ է տեսել մեր սիրտը ավեր ու կրակ»: Ցավի ուժգնությունից քարացել ենք, սառել, մեր ուղեղն այլևս թույլ չի տալիս, որ ցավ զգանք, որպեսզի ապրել կարողանանք: Իսկ մենք էլ ոչինչ չենք զգում: Լա՞վ է այդպես: Թմբիրի բաժնեմասը չարաշահված չէ՞: Մի քայլ ու... ամոլումը: Մենք պիտի զգանք, պիտի վերադարձնենք հայի մե՛ծ-մե՛ծ սիրտը, մեր «ցեղին սիրտը»: Այլևս ոչ մի վերջին ուսուցիչ, վերջին պետ: Փոխարենը Վարուժանը կասեր՝ վերջին լացն է: Այո՞, վերջին ցավը, անկումը, հուսալքումը: Սիրուց ուժ առած՝ հայը պիտի ակամջալուր լինի ճամփի հետևում մնացած իր պատմության գոռոցին, հետ դառնա, բռնի նրա ձեռքը. չէ՞ որ նա է միակ անդավաճան ուղեկիցը, որ տանելու է ճիշտ ուղղությամբ: Գնալու են, ու հայը հանկարծ լույսից շլացած հայացքը հառելու է վեր: Իսկ վերևում Արարատի գագաթը պնդող արշալույսի շողերն են, փառքի ու հզորության, վաստակած խաղաղության արշալույսի: Ու շփոթահար մայելու է գոհ ժպտացող ալեհեր պատմությանը. չանսար պատմության ձայնին ու շարունակելու ճանապարհը՝ մանկուրտ էր դառնալու: Փրկված ու ապահով է հայը. շնորհակալ է պատմությանը: Փրկված ու ապահով է պատմությունը. շնորհակալ է հային:

Սուսաննա ՀԱՐՉՅԱՆ
Բանասիրական ֆակուլտետ, 3-րդ կուրս

Լույս է տեսել



Վերահրատարակվել են ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Ջարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի դոցենտ Մարինե Միքայելյանի «Բռնության և զոհի հոգեբանություն» և «Հոգեբանամանկավարժական հետազոտության մեթոդաբանություն և մեթոդներ» ուսումնամեթոդական ձեռնարկները:

«Բռնության և զոհի հոգեբանություն» ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի ու ՀՊՄՀ Հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի գիտական խորհուրդների կողմից: Գիրքը նպատակաուղղված է սոցիալ-հոգեբանական մոր բնագավառի՝ զոհաբանության ուսումնասիրությանը: Ձեռնարկում ներկայացված են զոհաբանության առարկան, խնդիրները, զարգացման միտումները, բռնության և զոհի հոգեբանության մեթոդները, զոհերի տարաբնույթ դասակարգումները, անձի զոհային հատկանիշները: Քննարկվում են բռնության տեսակները և հիմնական ձևերը, ընտանեկան բռնության զոհերի հոգեբանական առանձնահատկությունները, դպրոցական բռնության պատճառները և հետևանքները, աշխատավայրում կիրառվող բռնության՝ մոբինգի դրսևորումները: Դիտարկվում են զոհի-այցելուի հետ իրականացվող խորհրդատվական աշխատանքի յուրահատկությունները, հոգեթերապիայի հիմնական փուլերը, այցելուի դիմադրությունը փոփոխությունների հանդեպ և հոգեթերապիայի քայլերը՝ ուղղված այցելուի դիմադրության հաղթահարմանը:

Ձեռնարկը նախատեսված է բուհերի հոգեբանության ֆակուլտետների դասախոսների, ասպիրանտների, ուսանողների, անձի զոհայնության ուսումնասիրությանը զբաղվող մասնագետների լայն շրջանակի համար:

«Հոգեբանամանկավարժական հետազոտության մեթոդաբանություն և մեթոդներ» ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված է հոգեբանամանկավարժական գիտահետազոտական աշխատանքի մեթոդաբանությունը, ինչպես նաև հետազոտության պլանավորման և իրականացման տրամաբանությունը, հետազոտության տեսական և փորձարարական մեթոդները, դիտման, գիտափորձի, հարցման, թեստավորման, հետազոտական տվյալների մշակման մեթոդների տարատեսակներն ու կիրառման առանձնահատկությունները: Պարզաբանվում են գիտական աշխատանքի ձևակերպմանը, գրախոսականին և պաշտպանությանը ներկայացվող պահանջները: Ձեռնարկը հասցեագրված է հոգեբանի և մանկավարժի մասնագիտացում ստացող ուսանողներին, մագիստրանտներին, հայցորդներին, ասպիրանտներին, դասախոսներին, կրթության ոլորտում հետազոտական աշխատանք իրականացնող մանկավարժներին:

Գրանցման վկայական՝ 01U00184 տրված է 26.03.2008 թ. Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97: Էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com Ծավալը՝ 2 տպ. մասով

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը կարող էք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների բեկնածու էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ